

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԼԵՈՆԱՍԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի մասնակիցներին

Մենք իրականացրել ենք «ԼԵՈՆԱՍԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Տնօրինությունը պատասխանատու է սույն հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք աուդիտորի վարքագծի նկատմամբ պահանջները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, առ այն որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատումների հիմնավորվածությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը Ընկերության ֆինանսական վիճակի առ 31-ը դեկտեմբերի 2013թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա նրա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

27 մարտի 2014թ.

Վահագն Համբարձումյան
Տնօրեն
Աուդիտոր



Գայանե Խաչատրյան
Աուդիտի Ղեկավար
Աուդիտոր

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

Երևան, Եր. Քոչարի 23/1

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնրգ.	2013թ.	2012թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	5,732,022	7,578,373
Անավարտ նյութական ակտիվներ	14	328,405	328,405
Ոչ նյութական ակտիվներ	15	7,583	21,775
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	16	3,130,244	2,427
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	17	382,924	68,721
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		<u>9,581,178</u>	<u>7,999,701</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	18	590,753	644,876
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19	283,876	251,084
Դեբիտորական պարտքեր բյուջեին	20	127,529	12,713
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21	41,407	61,189
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		<u>1,043,565</u>	<u>969,862</u>
Ընդամենը ակտիվներ		<u>10,624,743</u>	<u>8,969,563</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	22	227,770	227,770
Եմիսիոն եկամուտ		1,018,215	1,018,215
Վերազնահատումից տարբերություններ		4,451,329	6,307,668
Չբաշխված շահույթ		618,555	537,447
Ընդամենը սեփական կապիտալ		<u>6,315,869</u>	<u>8,091,100</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	23	617,588	629,242
Բանկային վարկեր և փոխառություններ	24	2,839,480	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	24	198,552	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		<u>3,655,620</u>	<u>629,242</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	23	89,089	3,646
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25	454,709	139,192
Կրեդիտորական պարտք բյուջեին	26	50,306	63,843
Պահուստներ	25	59,150	42,540
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		<u>653,254</u>	<u>249,221</u>
Ընդամենը պարտավորություններ		<u>4,308,874</u>	<u>878,463</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>10,624,743</u>	<u>8,969,563</u>

Տնօրեն

Վալերի Մեջլումյան

Գլխավոր հաշվապահ

Տիգրան Արաբաջյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստվել է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բավարարող մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Ծնթգ.	2013թ.	2012թ.
Հասույթ	5	2,578,863	4,702,163
Վաճառքի ինքնարժեք	6	(2,106,330)	(3,751,024)
Իրացման ծախսեր	7	(350)	(2,202)
Վարչական ծախսեր	8	(548,124)	(573,642)
Այլ եկամուտներ	9	122,467	34,139
Այլ ծախսեր	10	(120,146)	(27,784)
Գործառնական գործունեության արդյունքները		(73,620)	381,650
Ֆինանսական ծախս /զուտ/	11	(18,493)	(1,940)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ եկամուտ		96,367	910
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		4,254	380,620
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	12	(2,539)	(342,450)
Տարվա շահույթ/(վնաս)		1,715	38,170
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում/զուտ/		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		1,715	38,170

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2014թ. փետրվարի 20-ին:

Տնօրեն

Վալերի Մեջլումյան



Գլխավոր հաշվապահ

Տիգրան Արաբաչյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Բաժնետիրակ ան կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահա տման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ.	227,770	1,018,215	6,262,272	399,833	7,908,090
Տարվա շահույթ/վնաս	-	-	-	38,170	38,170
Ծշգրտում	-	-	144,840	-	144,840
Ներքին շարժ	-	-	(99,444)	99,444	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	38,170	38,170
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	227,770	1,018,215	6,307,668	537,447	8,091,100
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	227,770	1,018,215	6,307,668	537,447	8,091,100
Տարվա շահույթ/վնաս	-	-	-	1,715	1,715
Ծշգրտում	-	-	(1,776,946)	-	(1,776,946)
Ներքին շարժ	-	-	(79,393)	79,393	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	1,715	1,715
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	227,770	1,018,215	4,451,329	618,555	6,315,869

Տնօրեն

Վալերի Մեջլումյան



Գլխավոր հաշվապահ

Տիգրան Արաբաջյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: